Բրիտանական գրականություն, Արձակ, Հեքիաթ

Թարգմանիչ՝ Գ. Հախվերդյան

Օսկար Ուայլդ

Երևելի հրթիռը

Թագավորի որդին որոշել էր ամուսնանալ և այդ առիթով ամենուր խնդություն էր տիրում: Մի ամբողջ տարի արքայազնը սպասել էր իր հարսնացուին: Նա ժամանել էր վերջապես: Սա ռուս արքայադուստր էր և ամբողջ ճանապարհը Ֆինլանդիայից սկսած անցել էր հյուսիսային 6 եղջերուներին լծած սահնակով: Այդ սահնակը կարծես հսկայական կարապ լիներ, որի թևերի արանքում նստել էր ինքը: Ինքը ճերմակ էր, ինչպես ձյունե պալատը, որում ապրել էր մշտապես: Հարսնացուին դիմավորելու համար դռյակի առաջ սպասում էր արքայազնը: Արքայադստերը տեսնելուն պես նա ծնկի իջավ և համբուրեց ձեռքը:

— Ձեր նկարն անչափ գեղեցիկ էր,— շշնջաց նա, բայց դուք ավելի գեղեցիկ եք:

— Առաջ նա նման էր սպիտակ վարդի,— ասաց մանկլավիկը, իսկ հիմա կարծես ալ վարդ լինի:

Եվ ողջ արքունիքը համակվեց հրճվանքով: Երեք օր բոլորը կրկնում էին.

— Ճերմակ վարդ, ալ վարդ, ճերմակ վարդ, ալ վարդ...

Թագավորը հրամայեց, որ մանկլավիկի աշխատավարձը կրկնապատկեն: Բայց մանկլավիկը ոչինչ չէր ստանում և ոչինչ չշահեց: 3 օր անց եղավ հարսանիք: Դա մի շքեղ հանդես էր, խրախճանքը տևեց 5 ժամ: Արքայազնը և արքայադուստրը նստած էին մեծ սրահում ու խմում էին չնաշխարհիկ բյուրեղյա գավաթից: Միայն ճշմարիտ սիրահարները կարող էին խմել դրանից, որովհետև, երբ գավաթին կեղծ շուրթեր էին դիպչում, գավաթն իսկույն դառնում էր մուգ և անթափանց:

Թագավորը հրամայել էր արքունի հրագետին, որ անձամբ ղեկավարի հրավառությունը: Հրթիռները, որ շարվեցին արքունի այգում սկսեցին զրուցել.

— Աշխարհն իրոք հրաշալի է,— ասաց զավեշտահրթիռը: — Ապա մի նայեք այս դեղին կակաչներին: Ճամփորդելն ընդլայնում է մարդուս հորիզոնը:

— Աշխարհը թագավորի այգով չի վերջանում,— ասաց մեծ հռոմեական մոմը:

— Այն վայրը, որ մարդ սիրում է, աշխարհն է որ կա,— բացականչեց հրանիվը: — Նա հպարտանում էր իր սիրուց կոտրված սրտով: — Բանաստեղծներն այնքան գրեցին սիրո մասին, որ սպանեցին այն և նրանց ոչ ոք այլևս չի հավատում:

— Անհեթեթ միտք,— գոչեց հռոմեական հրթիռը: — Երազները երբեք չեն ծերանում, երբեք չեն մեռնում: Նորապսակները շատ են սիրում միմյանց:

Երբ լռություն տիրեց մի գոռոզ հրթիռ ասաց.

— Որքան բերել է նորապսակների բախտը, որ նրանց հարսանիքին պիտի արձակեն ինձ:

Զավեշտահրթիռը առարկեց.

— Ինչ թվում էր, թե պատիվը մեզ են անում:

— Ձեր դեպքն այլ է, պատասխանեց գոռոզ հրթիռը: — Ես առանձնահատուկ երևույթ եմ: Ես երևելի հրթիռ եմ, երևելի ծնողների զավակ: Արար աշխարհում չկա մեկը, ով ինձնից ավելի զգայուն լինի:

— Զգայուն անձը,— ասաց հռոմեական մոմը շշուկով,— այն անձն է, ով կանգնում է ուրիշների ոտքերի վրա, որովհետև վախենում է կոշտուկներից:

— Եթե ինձ երեկոյան մի բան պատահի, ի՞նչ դժբախտություն կլինի բոլորի համար,— ասաց գոռոզ հրթիռը: — Նորապսակները կդժբախտանան և նրանց ամուսնական կյանքը անվերադարձ կթունավորվի, իսկ թագավորը, վստահ եմ, չի դիմանա այդ հարվածին: Ես ունեմ արտասովոր երևակայություն և պատկերացնում եմ առարկաները բոլորովին այլ կերպ: Իսկ դուք այնպես եք ծիծաղում, ասես նորապսակներն ամուսնանալու մտադրություն անգամ չեն ունեցել:

— Իսկ ի՞նչ վատ է ծիծաղը,— հերաքրքրվեց հրագունդը: — Ես կտանեմ աստղերին նորապսակների ամուսնության լուրը:

— Ուրիշ բան չէի էլ սպասում,— ասաց գոռոզ հրթիռը: — Շատ տափակ մոտեցում կյանքին: Դուք պարզապես դատարկություն եք, ուրիշ ոչինչ: Երբ ամբողջ հրաշքը այստեղ է տեղի ունենում, երբ ես վառվում եմ:

— Դու ամենադյուրագրգիռ էակն եք,— ասաց բենգալյան կրակը:

— Իսկ դուք իմ իմացած ամենագռեհիկը: Դուք չեք կարող հասկանալ իմ բոլոր մտերմիկ զգացմունքները արքայազնի հանդեպ: Անգամ եթե ճանաչեի նրան, երբեք ընկերություն չէի անի հետը: Ընկերոջը ճանաչելուց ավելի վտանգավոր բան չկա:

— Ավելի լավ է զգուշանալ թրջվելուց,— ասաց հրագունդը:

— Քեզ համար՝ անկասկած: Իսկ ես լաց եմ լինում, երբ քեֆս տալիս է:

Նա սկսեց աղի արտասուք թափել:

— Ըստ երևույթի նա իսկապես ռոմանտիկ բնավորություն ունի, եթե հեկեկում է առանց պատճառի,— ասաց հրանիվը:

Սակայն հռոմեական մոմն ու բենգալյան կրակը շատ էին զայրացել և կրկնում էին.

— Դատարկ բան է, դատարկ բան է:

Իսկ արքայազնը և արքայադուստրը պարում էին լուսնի լույսի տակ: Երբ եղավ ժամը 12-ը, բոլորը դուրս եկան պարտեզ և թագավորը կանչել տվեց արքունի հրագետին:

— Հրավառությունը սկսե՛ք,— հրամայեց թագավորը:

Հրագետն ուներ 6 օգնական, որոնցից յուրաքանչյուրը մի—մի ջահ էր տանում:

—Վզզզ, վզզզ,— սուլեց հրանիվը հենց որ սկսեց պտտվել սեփական առանցքի շուրջը:

— Բում-բում,—նրան հետևեց հռոմեական մոմը:

Այնուհետև զավեշտահրթիռները պար բռնեցին այգում, իսկ բենգալյան կրակն ամեն ինչ կարմիր ներկեց: Պայթեց նաև հրագունդը և երկինք սլացավ: Բոլորն էլ մեծ հաջողություն էին վայելում բացի երևելի հրթիռից: Նա իր արցունքներից այնպես էր թրջվել, որ ի վիճակի չէր վեր սլանալ: Նրա վառոդը այնքան էր խոնավացել, որ այլևս պիտանի չէր:

— Հավանաբար ինձ պահում են ավելի ճոխ մի հանդեսի համար,— մտածեց հրթիռը:

Հաջորդ օրը այգեպանները եկան պարտեզը կարգի բերելու:

— Սա ըստ երևույթին պատգամավորությունն է,— մտածեց հրթիռը և որոշեց ըստ արժանվույն դիմավորել նրանց: Եվ նա դեմքը խոժոռեց, ասես մտածում էր հույժ կարևոր բանի մասին: Բայց ծառաները նույնիսկ չնկատեցին նրան: Միայն մեկը նկատեց նրան և ասաց.

— Սա ի՞նչ փչացած հրթիռ է,— բացականչեց նա և հրթիռը նետեց ցանկապատի մյուս կողմը:

— Փչացած հրթի՞ռ, փչացած հրթի՞ռ,— ասաց նա ցանկապատի վրայով թռչելիս: — Ուզում էր ասել՝ հրաշալի հրթիռ:

Ու ընկավ տիղմի մեջ մտածելով՝ «Սա նորաձև լոգարան է»:

Նրա առաջ հայտնվեց մի կանաչ գորտ:

— Դուք նորե՞կ եք,— հարցրեց գորտը: Ի՞նչ եք կարծում այսօր անձրև կգա:

— Ըհը,— ասաց հրթիռը:

— Ի՞նչ ախորժալուր ձայն ունեք: Նման է կռկռոցի: Դուք այսօր կլսեք մեր համերգը: Ագարակատիրոջ տան առաջ: Բոլորը մեզ են լսում: Ագարակատիրոջ կինն ասում էր հարևանուհուն, թե ինչպես ողջ գիշեր աչք չի կպցրել մեր պատճառով:

— Անվերջ խոսում ես,— զայրացած ասաց հրթիռը:

— Ես սիրում եմ ինքս միշտ խոսել, որ չլինի վեճ:

— Իսկ ես սիրում եմ վիճել,— ասաց հրթիռը:

— Վիճելը գռեհիկ բան է:

Եվ գորտը հեռացավ:

— Դու շատ եսասեր ես,— ասաց հրթիռը: — Պետք է օրինակ վերցնես ինձնից, քանի որ բոլորին է հայտնի իմ համեստությունը:

— Անիմաստ է խոսել գորտի հետ,— ասաց մի ճպուռ: — Նա արդեն թողել հեռացել է:

— Ավելի վատ իր համար: Ես սիրում եմ խոսել ինքս ինձ համար: Այնքան խելացի եմ գտնվում երբեմն, որ ոչինչ չեմ հասկանում իմ ասածներից:

— Ուրեմն պիտի փիլիսոփայություն դասավանդեք,— ասաց ճպուռը և թռավ:

— Ինչ հիմարն էր,— մտածեց հրթիռը:— Իր միտքը զարգացնելու այսպիսի առիթ էլ չի ունենա:

Նա ավելի խոր ընկղմվեց ցեխի մեջ:

Նրան մի բադ մոտեցավ: Գեղեցկուհի էր համարվում բադերի մեջ:

— Ի՞նչ տարօրինակ տեսք ունեք: Դա դժբախտության արդյո՞ւնք է,— հարցրեց նա հրթիռին:

— Իսկույն երևում է, որ ամբողջ կյանքդ գավառում ես անցկացրել: Կապշես, եթե իմանաս, որ ես երկինք եմ սլանում և թափվում կրակի տեսքով:

— Դա ինձ չի հետաքրքրում, որովհետև դրանից ոչ մի օգուտ չկա: Եթե կարողանայիր հերկել դաշտերը, հոտը հսկել, դա ուրիշ բան:

— Հարգելիս,— գոչեց հրթիռը ինքնագոհ: — Իմ դասին պատկանող անձինք, երբեք օգտակար չեն լինում: Մենք կիրթ շարժուձև ունենք: Դա մեր փառքն է:

— Լավ, լավ,— ասաց բադը: — Նախասիրությունները կարող են տարբեր լինել: Ուրախ կլինեմ, եթե մեզ մոտ բնակություն հաստատեք:

— Ոչ, ոչ,— բացականչեց հրթիռը: — Ես այստեղ լոկ հյուր եմ: Այստեղ հասարակություն չկա: Ես պիտի պալատ վերադառնամ և ցնցեմ կյանքը:

Բադը հիշեց, որ քաղցած է և հեռացավ կեր գտնելու:

— Իսկույն երևաց, որ սա քաղքենի է,— ասաց հրթիռը և սկսեց մտածել հանճարի միայնության մասին:

Մոտեցան երկու փոքրիկ տղաներ:

— Սա պատգամավորությունն է,— ասաց հրթիռը:

— Տե՛ս այս կեղտոտ փայտը,— ասաց տղաներից մեկը:

— Ոսկե փայտ,— մտածեց հրթիռը: — Դա էր ուզում ասել:

Տղաները որոշեցին հրթիռն էլ որպես փայտ գցել խարույկի մեջ և հրթիռը մտածեց, որ իրեն ուզում են արձակել օրը ցերեկով, բոլորի համար: Տղաները նրան գցեցին կրակի մեջ, իսկ իրենք գնացին ննջելու: Հրթիռը թաց էր ու չէր բռնկվում: Բայց հետո չորացավ ու պատրաստվեց թռչել:

— Ես կհասնեմ աստղերին,— մտածեց նա:

Շշշ... և նա երկինք սլացավ:

— Հոյակապ է: Պատկերացնում եմ, թե բոլորը ինչպես են հիանում ինձնով:

Սակայն նրան ոչ ոք չէր նկատում: Նա սկսեց մտածել պայթելու և ողջ երկիրը կիզելու մասին: Որպեսզի նրան երկար հիշեն: Հրթիռը պայթեց և նրանից մի փայտի կտոր մնաց, որն ընկավ սագի մեջքին:

— Աստված իմ, փայտի անձրև է սկսվում,— բղավեց սագը:

— Ասում էի չէ՞, որ բոլորին կշշմեցնեմ,— ասաց հրթիռն ու հանգավ: